

ԱԳԼՃԿ (Ավտոգազայցաճնշակայան)  
ՀՀ Կոտայքի մարզ, համայնք Աբովյան, գ. Պտղնի 23-րդ փողոց 4  
հողամաս

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ  
/լրամշակված/

Կառուցապատող՝

Վ. Թումանյան

ԱԶ Արամ Գալոյան՝



Երևան 2024

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	4
1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն .....	4
1.2	Հապավումներ.....	4
1.3	Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը.....	5
1.4	Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը.....	5
1.5	Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ) .....	10
1.5.1	<i>Հողատարածքի առկա վիճակ .....</i>	10
1.5.2	<i>Նախատեսվող գործունեության նկարագիր .....</i>	11
1.5.3	<i>Գլխավոր հատակագիծ .....</i>	14
1.5.4	<i>Իրադրային հատակագիծ .....</i>	15
1.5.5	<i>Շինհրապարակի հատակագիծ և ժամանակացույց .....</i>	16
1.5.6	<i>Կանաչապատման և բարեկարգման աշխատանքներ .....</i>	17
1.5.7	<i>Հողային աշխատանքներ. Կադրային ապահովում և շինտեխնիկա .....</i>	17
1.5.8	<i>Նյութերի և բնառեսուրսների օգտագործում .....</i>	18
1.5.9	<i>Գազամատակարարում .....</i>	19
1.6	<i>Գազալցակայանի տեխնիկական բնութագրերը .....</i>	20
1.6.1	<i>Տեխնոլոգիական գործընթացի համառոտ նկարագիր .....</i>	21
1.7	<i>Ջրային պաշարների պահպանություն .....</i>	22
1.7.1	<i>Տնտեսական և կենցաղային կարիքների ջրօգտագործման ծավալները.....</i>	22
1.7.2	<i>Ջրահեռացում .....</i>	23
1.8	<i>Արդյունաբերական թափոններ .....</i>	23
1.9	<i>Էլեկտրամատակարարում .....</i>	24
1.10	<i>Աղմուկ և թրթռում: .....</i>	28
2.	ՆԱԽՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	29
2.1	Ընդհանուր տեղեկություններ.....	29
2.2	Կլիման.....	30
2.3	Օդային ավազան.....	35
2.4	Ջրային ռեսուրսներ.....	40
2.5	Հողերի նկարագիրը.....	42
2.6	Կենսաբազմազանություն.....	46
2.6.1	Բուսական աշխարհ .....	47
2.6.2	Կենդանական աշխարհ .....	47
2.7	Բնության հատուկ պահպանվող տարածքներ .....	48
2.8	Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկ .....	49
<b>3.</b>	<b>ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՕԴԵՐՆՈՒԹՅԱՆ ԱՐԱՄԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԸՆԴՈՒՄԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ .....</b>	<b>51</b>

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ ..... 52

4.1 Ռիսկերի գնահատում ..... 53

4.2 Արտանետումների աղբյուրները ..... 53

4.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն ..... 53

4.3.1 *Մթնոլորտային օդ*..... 53

4.3.2 *Ջրային ռեսուրսներ*..... 54

4.3.3 *Հողային ռեսուրսներ*..... 54

4.3.4 *Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը* ..... 55

4.3.5 *Հակահրդեհային միջոցառումներ* ..... 55

4.3.6 *Աղմուկ և թրթռում* ..... 56

4.3.7 *Թափոնների կառավարում*..... 57

4.3.8 *Տարածքի բարեկարգում կանաչապատում*..... 57

4.4 Թափոնների կառավարում ..... 58

5. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ ..... 58

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ ..... 60

ՍՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ..... 63

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ..... 25

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ..... 26

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

1.2 Ձեռնարկող՝	Վ. Թումանյան
1.4 Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝	ՀՀ Կոտայքի մարզ, համայնք Աբովյան, գ. Պտղնի 23-րդ փողոց 4 հողամաս
1.5 Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝	ՀՀ Կոտայքի մարզ, համայնք Աբովյան, գ. Պտղնի 23-րդ փողոց 4 հողամաս
1.6 Հեռախոս՝	+374 99994222

1.2 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

### 1.3 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Ավտոգազալցաճնշակայանի կառուցման նախագիծը նախատեսվում է իրականացնել ՀՀ Կոտայքի մարզ, համայնք Աբովյան, գ. Պտղնի 23-րդ փողոց 4 հողամաս հասցեում:

Ավտոգազալցաճնշակայանի կառուցման աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան, ենթարկվել է փորձաքննության ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից, համապատասխանում է հրդեհային անվտանգության պահանջներին /գրությունը կցված է Հավելվածներ բաժնում/:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Ավտոգազալցաճնշակայանի կառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման նախնական գնահատման հայտը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

### 1.4 Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական

ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

ՀՀ Կոտայքի մարզ, համայնք Աբովյան, գ. Պտղնի 23-րդ փողոց 4 հողամաս հասցեում նախատեսվող ավտոգազալցաճնշակայանի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև.

**ՀՀ Սահմանադրություն** (ընդունված 06.12.2015թ.) – 12-րդ հոդվածը <<**Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը**>> սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բանական օգտագործման վերաբերյալ՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

**«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք** (2014) - Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման “հայեցակարգերի” պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Համաձայն՝ “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” ՀՀ օրենքով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրությամբ փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները: Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների դասակարգվում են երեք կատեգորիայի՝ «Ա», «Բ», «Գ» ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Օրենքը հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:

**«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք** (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2007թ.) - կարգավորում է արտանետման թույլտվությունները և սահմանում է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները: Աշխատավայրերում, բնակելի և հասարակական վայրերում, բնակարանային տնտեսության վայրերում, ինչպես նաև շինարարական հրապարակներում աղմուկի թույլատրելի սանիտարական նորմերը սահմանվում են ենթաօրենսդրական ակտով:

**«ՀՀ հողային օրենսգիրք» (2001)** - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

**ՀՀ ջրային օրենսգրք 2002թ.** - Հայաստանի Հանրապետությունում ջրային հարաբերությունները կարգավորվում են սույն օրենսգրքով, օրենքներով և իրավական այլ ակտերով: *Ջրային հարաբերություններ*՝ ջրային ռեսուրսների, ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի և ՀՏԿ-ների կամ դրանց մասի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

**«Հողօգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքը** (2008թ) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

**«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004)** - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները: ՀՀ Կառավարության 121-Ն որոշումը, որը վերաբերում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003), պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

**«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք** (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

*«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք* (2000) - կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման ընթացակարգերը:

*«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք* (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14, 15, 16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

*«Բուսական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, 1999թ.*

*«Կենդանական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, 2000թ.*

*«ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010 թ. N 71-Ն որոշումը,*

*«ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010թ. N 72-Ն որոշումը*

*«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (27.11.2006թ.),* որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

*ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N 967-Ն որոշում,* որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի:

*ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման*



պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N 191-Ն որոշում:

ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի հուլիսի 31-ի «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N 781-Ն որոշում:

ՀՀ կառավարության 02.11.2017թ. N 1404-Ն «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը ել հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու ել հայաստանի հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի n 1026-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշում:

ՀՀ կառավարության 08.09.2011թ. N 1396-Ն «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, հայաստանի հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի n 1622-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու ել 2001 թվականի ապրիլի 12-ի n 286-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշում:

2002թ. հունիսի 12-ի ՀՕ-376-Ն օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթ,

Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015թ. նոյեմբերի 30-ի N 1243-Ն հրամանի հավելվածի 2-րդ կետի 16-րդ ենթակետ,

Կառավարության 2015թ. մարտի 3-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածի կարգի 141-րդ և 173-րդ կետերի, N 4 հավելվածի N 3 ցանկի 4-րդ կետի 1-ին ենթակետի «իզ» պարբերություն,

Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի N 102-Ն հրամանով հաստատված գործող նորմերով սահմանված երկրաշարժադիմացկունության հիմնական սկզբունքների, 2014թ. հունիսի 21-ի ՀՕ-110-Ն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի, 7-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի, 16-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի, 17-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի դրույթներ

«Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին ել տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու ել Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի n 1318-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 8 փետրվարի 2018 թվականի N 108-Ն որոշում

ՀՀ քաղաքաշինության նախարարի 03.02.2006թ. թիվ 24-Ն հրաման՝ ՀՀՇՆ II6.02-2006 «Մեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր»,

ՀՀ կառավարության 16.02.2006թ. թիվ 392-Ն որոշում «Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբեր՝ համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին»,

ՀՀ առողջապահության նախարարի 28.03.2017թ. «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» N2.2.4.016-17 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին

ՀՀ առողջապահության նախարարի 2002թ. փետրվարի 11-ի N 82 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 12-Ն հրաման

*ՀՀ ԿՍ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 05.04.2018թ. «Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածուին հավանություն տալու մասին» թիվ 43-Ս հրաման, ՄՆԻՊ 2.08.02-89 «Հասարակական շենքեր և շինություններ»,*

*ՀՀ քաղաքաշինության նախարարի 09.04.2014թ. ՀՀՇՆ 31-03.012014 «Հանրակրթական նշանակության շենքեր» շինարարական նորմերը հաստատելու մասին N 103-Ն հրաման*

ՀՀ կառավարության 27.05.2015թ.-ի N 764-Ն որոշում, որով հաստատվել է շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

**1.5 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)**

**1.5.1 Հողատարածքի առկա վիճակ**

Ավտոմեքենաների բնական գազով լիցքավորման կայանը նախատեսվում է կառուցել ՀՀ մարզ Կոտայք, համայնք Աբովյան, գյուղ Պտղնի 23 փողոց թիվ 4 հողամաս հասցեում, Վարդան Թումանյանի կողմից վարձակալված տարածքում:

**ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ**

Կադաստրային ծածկագիրը՝ 07-054-0332-0008

Մակերեսի չափը (հա)՝ 0.492796

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Հողամասի 0,0533 հա հատվածը գտնվում է է հոսանքի սպասարկման զոնայում, տվյալ հատվածում կառուցապատում չի նախատեսվում:

Հողատարածքը ազատ է կառուցապատումից, կից տարածքներով անցում են ինժեներական գծեր և հաղորդակցություններ, հարևանությամբ գտնվում են բնակելի տներ, հողամասեր և տարածքներ:

Դիտարկվող տարածքը սահմանակից է Վ. Թումանյանին /նախատեսվող գործունեության սեփականատեր/ պատկանող հեղուկ վառելիքի կայանին:

Կառուցապատման ենթակա հողատարածքի հարևանությամբ է գտնվում Աշոտ Վիրաբյանին պատկանող հողատարածքը՝ Պտղնի 23-րդ փողոց 2 հասցե, անշարժ գույքի /ծածկագիր՝ 07-054-0332-0024/: Նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության, Գործառնական

նշանակությունը կամ հողատեսքը՝ Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների /տեղեկանքը կցված Հավելվածներ բաժնում/:

Բնության հատուկ պահպանվող և /կամ/ պատմամշակութային հուշարձանների տարածքներ առկա չեն:

Հողատարածքում ծառաթփային բուսականությունը բացակայում է, հետևաբար ծառահատումներ չի նախատեսվում:

Ըստ իրականացված ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների արդյունքների հողի բերի շերտ ևս բացակայում է:

**1.5.2 Նախատեսվող գործունեության նկարագիր**

ՀՀ Կոտայքի մարզ, համայնք Աբովյան, գ. Պտղնի 23-րդ փողոց 4 հողամաս նախատեսվող ավտոգազալցաճնշակայանի նախագծի մշակման համար հիմք են հանդիսացել՝

- 02.03.2023թ. N84 նախագծային առաջադրանք
- անշարժ գույքի վարձակալության 11/07/2023թ. ս/մ 2465 պայմանագիր

Նախագծով նախատեսված է կառուցել ավտոմեքենաների լիցքավորման ճնշակայան 4 հատ ճնշակներով յուրաքանչյուրը 800 մ<sup>3</sup> ժամային ծախսով և 9 հատ սեղմված գազի երկփողանի լցասյունակներով մեկ ընդհանուր շվաքարանով:

Առաջին մասնաշենքում նախատեսվում են ճնշակայան և էլեկտրավահանային: Երկրորդ մասնաշենքում՝ պարզագույն թաքստոց, օպերատորական, հանգստի սենյակ և սան հանգույցներ:

Նախատեսվում է նաև կառուցել գազի կուտակիչների հոր: Ավտոգազալիցքավորման ճնշակայանի նախագծման և կառուցման համար հատկացված է 0.492796 հա տարածք:

Գազալիցքավորման ճնշակային կայանում նախատեսվում են "BOPEL" V=500մ /ժամ, P=250մթն տիպի՝ 4 հատ ճնշակային տեղակայումներ:

Բնական գազը մ/ճ գազատարից տրվում է ճնշակներին, որոնք համալրված են գազի հովացման սարքավորումներով: Հովացման սարքավորումները աշխատում են օդով: Արդեն հովացված բ/ճ գազը տրվում է լցասյուններին և ստորգետնյա կուտակիչներին՝ V=400լ 10հատ:

Ճնշակային տեղակայումները ապահովված են ավտոմատ կառավարման համակարգերով:

Ավտոմեքենաների գազալցման ճնշակային կայանը մեկուսացված է բնակելի զանգվածից՝ շինարարական նորմերի պահանջներին համապատասխան:

Համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 8-ի թիվ-1025 Ն որոշման գազի կուտակիչներից մինչև կոմպրեսորային կայան հեռավորությունը նախատեսված է

7.04մ, օպերատորային սենյակից մինչև կոմպրեսորային կայան 96,5մ, լիցքավորման շվաքարանից մինչև կոմպրեսորային կայան 7.53մ, սեպտիկ հորից մինչև կոմպրեսորային կայան 17մ, էլ. ենթակայանից մինչև կոմպրեսորային կայան 15մ, հակահրդեհային ջրամբարից մինչև կոմպրեսորային կայան 7, կոմպրեսորային կայանից մինչև 110կՎտ ՕԳ 27,8մ, կոմպրեսորային կայանից մինչև M4 Երևան-Սևան ավտոճանապարհ 18,5մ, լիցքավորման շվաքարանի հեռավորությունը M4 Երևան-Սևան ավտոճանապարհից 21.8մ:

Նախատեսվող ԱԳԼՃ կայանի օպերատրոական շինության հեռավորությունը հարևանությամբ գտնվող հեղուկ վառելիքի կայանի հեղուկ վառելիքի պահեստից գտնվում է 10.7 մ հեռավորության վրա:

2 կմ շառավիղով այլ ավտոգազացված շակայան տարածքում չկա:

Մոտակա բնակելի շինությունը գտնվում է 137,2 մ հեռավորության վրա:

ԱԳԼՃԿ-ի ավտոմատ հրդեհային համակարգը նախատեսված է հսկվող շինություններում հրդեհի հայտնաբերման և համապատասխան ծառայություն տեղեկացման համար:

Որպես ավտոմատ հրդեհային ազդասարքերի ընդունող-հսկիչ սարք օգտագործվում է Dozor-4, որը գտնվում են օպերատրականում: Որպես ավտոմատ հրդեհային ազդասարքերի վերջնասարքեր օգտագործվում են ИП212-3У, ИП101-07ем, ИП -МСП-УИК մակնիշի տվիչներ: Հրդեհային ազդարարման համար տեղադրվում են լուսաձայնային և խոսկային ազդարարներ: Ավտոմատ հրդեհային ցանցերը կատարվում են КПСЭНГ FRLS մակնիշի մալուխով ՊԽՎ խողովակների մեջ կամ կաբել-անցուղիների մեջ:

Սարքերի մոնտաժը և ավտոմատ միջոցների անցկացումը կատարվում է միացման և դասավորության սխեմաների հիման վրա: Հողանցում է կատարված է համաձայն ПУЭ և ВСН296-81:

Քաղաքացիական պաշտպանության ու արտակարգ իրավիճակների կանխարգելում բաժնում նախատեսված է պարզագույն թաքստոց /0,00 նիշ, 1-ին հարկ/, որը տեղակայված է օպերատրականի շենքում խուլ պատերով, որը ապահովում է պատասպարվողների վրա հարվածային ալիքի ազդեցությունը նվազեցնելու և բեկորներից պաշտպանելու համար:

Նախատեսվող ԱԳԼՃ կայանի տարածքում սպասասրահ չի նախատեսվում, քանի որ հարևանությամբ գոյություն ունեցող հեղուկ վառելիքի կայանի տարածքում, որը ևս պատկանում է Վ. Թումանյանին, արդեն իսկ կա սպասասրահ և հաճախորդները կօգտվեն այդ սպասասրահից: Սպասասրահը կահավորված է հասարակական զուգարանով: Հասարակական զուգարանի կառուցվածքը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2009 թվականի ապրիլի 16-ի 06-Ն հրամանով հաստատված «Հասարակական զուգարաններին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2-III-2.13 սանիտարական կանոնների և նորմերի և 2010 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 21-Ն հրամանի 21-րդ կետի պահանջներին:

**Տեխնիկատնտեսական ցուցանիշներ**

**Ճնշակայան**

- Ընդհանուր մակերես - 162քմ
- Օգտակար մակերես - 140.2 քմ
- Կառուցապատման մակերես - 162 քմ
- Առաստաղի բարձրություն - 4.45 մ
- Հարկերի քանակը – 1

**Օպերատորական**

- Ընդհանուր մակերես - 118.0 քմ
- Օգտակար մակերես - 101.6 քմ
- Շինարարության մակերես - 118.0 քմ
- Առաստաղի բարձրություն - 3.0 մ
- Հարկերի քանակը – 1

**Գազի կուտակիչների հոր /10 հատ, 400լ տարողության/**

- Ընդհանուր մակերես - 37.5քմ
- Օգտակար մակերես - 28 քմ
- Կառուցապատման մակերես - 37.5 քմ


**Գազի լիցքավորման շվարարան**

- Ընդհանուր մակերես - 786քմ
- Օգտակար մակերես - 560 քմ
- Կառուցապատման մակերես - 786 քմ
- Լցասյունակ 9 հատ

- Տարածքի ընդհանուր մակերես` 4928.0 քմ
- Կանաչապատման մակերես` 1368.0քմ /27.76%/
- Կառուցապատման մակերես` 1103.5քմ /22.4%/
- Բարեկարգման մակերես ` 2456,5քմ /49.84/



1.5.4 Բրադրային հատակագիծ



		ՀՀ, Մարզ Կոտայք, համայնք Արուվան, գյուղ Պտղնի 23 փողոց թիվ 4 հասցեում հասարակական կառուցապատման նշանակության տարածքամատկոմբենաների բնական զազով լիցքավորման կայան		Պատվեր N37-23	
Ճարտ.	Լ.Վասիլյան	ճարտարապետա-շինարարական	Փուլ	Թերթ	Թ երբեր
			ԱՆ	ՃՇ-4	12
		ԻՐԱԿԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:2000	«ՆԵՅՄԱՎԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ		

1.5.5 Շինհրապարակի հատակագիծ և ժամանակացույց

**ՇԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԱՅՍԵՆԱԿԱԳՈՒՅՑ**

Գ	ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Մեկ տարի											
		1											
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	Քողային աշխատանքներ	■	■										
2	Քիմքերի իրականացում		■	■									
3	Կարկասի և ծածկերի իրականացում			■	■								
4	Արտաքին պատերի և միջնորմների իրականացում				■	■							
5	Դռների և պատուհանների տեղադրում						■	■					
6	Արտաքին երեսպատում							■	■				
7	Ինժեներական կոմունիկացիաների իրականացում								■	■			
8	Ներքին հարդարման աշխատանքներ									■	■		
9	Տարածքի բարեկարգման աշխատանքներ											■	■

**Չրահանգներ ըստ շին. հրապարակի**

- Շին աշխատանքները սկսելուց առաջ անհրաժեշտ է կազմել աշխ. նախագիծ:
- Շին աշխատանքները կատարել պահպանելով անվտ. տեխ. պայմանը ըստ ՇՆ - III- 4- 2008 թ.
- Շինարարությունը սկսել համապատասխան շին. թույլտվություն ստանալուց հետո:
- Շին. աշխատանքները կատարել ըստ նշված ժամանակացույցի:

**ԿԱԶՄԵՑ**  
**ՊԱՏՎԻՐԱՏՈՒՄՆԵՐ**

**Ա. Ալեքսանյան**  
**ԱՐՄԵՆ ԲԱՐՄԵՂՅԱՆ**

						ՔՔ, Մարզ Կոտայք, համայնք Արուսյան, գյուղ Պտղոնի 23 փողոց թիվ 4 հասցեում հասարակական կառուցապատման նշանակության տարածքում ավտոմեքենաների բնական գազով լիցքավորման կայան	Պատվեր 037-23
Ճարտ.	Լ. Վասիլյան	<i>[Signature]</i>				Ճարտարապետա-շինարարական	Փուլ
							ՍԼ
						Մեթոդ	ՑՇ-11
						ՍՊԸ	12
						ՍՊԸ	

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ**



**1.5.6 Կանաչապատման և բարեկարգման աշխատանքներ**

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է կանաչապատել և բարեկարգել տարածքը: Կանաչապատվող տարածքի մակերեսը կազմում է 1368մ<sup>2</sup>, նախատեսվում է սիզախոտ և թփեր: Կանաչապատ տարածքների ոռոգումն համար կառուցապատող ընկերությունը կդիմի «ԿՈՏԱՅՔ» ջրօգտագործողների ընկերություն տեխնիկական պայմաններ ստանալու համար:

Կանաչապատման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ 300մ<sup>3</sup> հողաբուսաշերտի ձեռքբերումը կհամաձայնցվի տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

Կանաչապատ տարածքի 1 մ<sup>2</sup>-ի մեկ ոռոգման համար ջրի ծախսի նորման կազմում է 4-6 լ/ մ<sup>2</sup>:

Տեղանքի շոգ կլիմայական պայմանների համար ընդունում ենք առավելագույն արժեքները.

գազոնների ոռոգում՝  $n_6 = 0.006 \text{ մ}^3/\text{մ}^2$

Ոռոգման համար ջրապահանջը որոշվում է՝

$$W_{u.3} = (n_6 \times S) \times K \times t$$

որտեղ՝ S – ոռոգվող տարածքի մակերեսն է, գազոնների մակերեսը՝  $S_1 = 1368 \text{ մ}^2$ ,

K – ոռոգման օրական հաճախականությունն է,  $K = 2$

t - ոռոգման օրերի պլանավորված թվաքանակն է,  $t = 175 \text{ օր}$

$$W_{u.3} = (0.006 \times 1368) \times 2 \times 175 = \underline{\underline{2872,8}} \text{ մ}^3/\text{տարի}$$

**1.5.7 Հողային աշխատանքներ. Կադրային ապահովում և շինտեխնիկա**

Շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է հողային աշխատանքների հանույթ՝ 828 մ<sup>3</sup> և ետլիցք՝ 250մ<sup>3</sup>:

Ավելացած 578մ<sup>3</sup> հողային զանգվածը կտեղափոխվի համայնքի հետ համաձայնեցված վայր:

Շինարարական աշխատանքներում մասնակցող աշխատողների ընդհանուր թիվը՝ 38 մարդ, որից

- Բանվորներ -32 մարդ
- ԻՏԱ -6 մարդ

Շինարարության ժամանակ օգտագործվող հիմնական շինարարական տեխնիկայի, փոխադրամիջոցների ցանկը՝

- Էքսկավատոր՝ 1 հատ
- Կռունկ՝ 1 հատ
- Բեռնատար՝ 1 հատ

- Բետոնխառնիչ մեքենա՝ 1 հատ
- Ինքնաթափ՝ 2 հատ

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Ապրանքային բետոնը շին.հրապարակ է բերվում պատրաստի վիճակում՝ բետոնատար ինքնաթափերի միջոցով ավտոմատ բետոնա-շաղախային հանգույցից: Ամրանային իրերը պատրաստվում են հատուկ պոլիգոններում, մասամբ շին. հրապարակում:

**1.5.8 Նյութերի և բնատեսուրսների օգտագործում**

Շինարարության ժամանակ օգտագործվելու են շինանյութեր, որոնց ցանկը և քանակները ներկայացված են աշխատանքային նախագծի համապատասխան բաժնում: Բնատեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքների ընթացքում, շինարարական աղբն է՝ 600 կգ: Շինարարական աղբը ամբողջությամբ կտեղափոխվի համայնքի հետ պայմանագրային հիմունքներով հատկացված վայր:

**a) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝**

$$W_{\text{է.ի}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

**n** – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 6 մարդ

**N**– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ<sup>3</sup>օր/մարդ

**n<sub>1</sub>**– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 32 մարդ

**N<sub>1</sub>** – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ<sup>3</sup>օր/մարդ

**T** – աշխատանքային օրերի թիվն է՝ 360 օր

$$W_{\text{խ.տ.}} = (6 \times 0.016 + 32 \times 0.025) \times 360 = 322.56 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 1.008 \text{ մ}^3/\text{օր:}$$

**b) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝**

$$U_1 = S_1 \times K_1 \times T \times D, \text{ որտեղ՝}$$

**S<sub>1</sub>** – ջրվող տարածքի մակերեսը, 3560 մ<sup>2</sup>,

**K<sub>1</sub>** – 1 մ<sup>2</sup> ջրցանի նորմը, 0.0015 մ<sup>3</sup>,

**T** – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 240

**D** – ջրցանի օրեկան քանակը, 2 անգամ

$$U_1 = 3560 \times 0.0015 \times 240 \times 2 = 2563,2 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 10.68 \text{ մ}^3/\text{օր}$$

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 2885.76 մ<sup>3</sup>/շին. ժամ:

Բանվորկան և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր սանհանգույցներ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Շինհրապարակում սանիտարական կանոնները և նորմերը պահպանվելուն են համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N15-Ն հրամանի համաձայն :

Շինարարական աշխատանքների ընթացքում ջրամատակարարումը կատարվելու է հատուկ նախատեսված ավտոմեքենաներով պայմանագրային հիմունքներով:

**1.5.9 Գազամատակարարում**

Համաձայն Գազպրոմ Արմենիա ՓԲԸ 30.08.2023թ. N02/17.1/3129-2023 գրության, ՀՀ Կոտայքի մարզ, համայնք Աբովյան, գ. Պտղնի 23-րդ փողոց 4 հողամաս նախատեսվող նախատեսվող ավտոգազալցաճնշակայանի գազամատակարարումը Q=4000մ<sup>3</sup>/ժամ ծախսով և P=0.7 ՄՊա ճնշմամբ հնարավոր է իրականացնել «Ջրվեժի» ԳԲԿ-ն սնող (Dպ-300) կողմնատար-գազատարից, որի տեխնիկական պայմաններն են՝

➤ Գործող գազատարում գազի ճնշումը	Քաշխ. փաստ = 1.1÷2.5 ՄՊա
➤ Գազատարի տրամագիծը Ø (մմ)	325 x 5մմ
➤ Գազատարի որևէ հատվածի վերականգնման (վերատեղադրման) և անհրաժեշտություն	չկա
➤ Միացման կետը	Ըստ նախագծի-«Ջրվեժի» ԳԲԿ-ն սնող (Dպ-300) կողմնատար-գազատարի մոտավորապես 0.045կմ-ից
➤ Օբյեկտի հեռավորությունը գազատարից	ըստ նախագծային լուծումների գործող   նորմատիվների պահանջների
➤ Տեղադրվող գազի հաշվիչ	Ըստ-գազասպառման ծախսերի
	7.1 Կառուցել՝ 7.1.1 Համապատասխան հզորության գազաբաշխիչ կայան (ԳԲԿ)՝ գործարանային արտադրության սարքավորումներով, որի կազմում պետք է լինեն՝
➤ Լրացուցիչ պայմաններ	ա) փոխմիացման, գազի մաքրման, գազի ճնշման նվազեցման, գազի հաշվառման, գազի հոտավորման և սեփական կարիքների համար գազի առման հանգույցներ; բ) էլեկտրասնուցման, կապի,

	<p>էլեկտրաքիմիական պաշտպանության, պահպանության և հրդեհային ձայնաազդանշանային, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգեր;</p> <p>7.1.2 ԳԲԿ-ն սնող կողմնատար-գազատար (Քնախ=6.4 ՄՊա), փականային հանգույցներում օգտագործելով ստորգետնյա գնդային փականներ:</p> <p>7.1.3 Միջին և ցածր ճնշման գազատարներ, նախատեսվող կամ հասարակական կառուցվող նշանակության շենքի գազիֆիկացման համար:</p> <p>7.2 Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը մշակել ՀՀ գործող նորմատիվային փաստաթղթերի, ինչպես նաև ՀՀ կառավարության 21.04.2023թ. № 584-Ն որոշմամբ ընդունված «Գազափոխադրման համակարգում անվտանգության և շահագործման կանոնները», ՀՀ կառավարության 13.04.2023թ. № 539-Ն որոշմամբ ընդունված «Գազաբախշման համակարգերի անվտանգության և շահագործման կանոնները», Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 23.12.2020թ. թիվ 121 որոշմամբ ընդունված ԵԱՏՄ ՏԿ 49/2020 տեխնիկական կանոնակարգի, ՀՀ կառավարության 16.07.2015թ. № 787-Ն որոշմամբ ընդունված կարգի պահանջներին համապատասխան և համաձայնեցնել շահագրգիռ կազմակերպությունների հետ:</p>
--	---

Գազամատակարարման տեխնիկական պայմանները կցված են Հավելվածներ բաժնում :

**1.6 Գազայցակայանի տեխնիկական բնութագրերը**

Ըստ տեխնիկական պայմանների, ավտոմեքենաների գազայցման մոդուլային կայանները նախատեսված են 9 բալ /ներառյալ/ սեյսմակայունության, -60° C արտաքին նվազագույն ջերմաստիճանի, 1960 Պա ձյան բեռի և 441 Պա քամու դինամիկ ճնշման հաշվարկով:

Գազայլցվող ավտոմոբիլների համար սեղմված վառելիքային գազը պետք է համապատասխանի ԳՈՍՏ 27577-87 պայմաններին: Դուրս եկող գազի հաշվարկային կազմը տոկոսային հարաբերությամբ ներկայացվում է՝

Մեթան	-95,01
Էթան	-1,42
Պրոպան	-0,51
Իզոբուտան	-0,05
Իզոպենտան	-0,02
Թթվածին	-0,06
Ազոտ	-2,45
Հեքսան	-0,01
Ծծմբաջրածին	-0,0015 գր/մ <sup>3</sup> :

Թույլատրված պարունակությունը և լիցքավորման պարամետրերն են՝

- Էթան – մինչև 20%, պրոպան – մինչև 5%, բուտան– մինչև 2%, ազոտ– մինչև 10%, ածխաթթու գազ– մինչև 2%:
- Գազի խտությունը /կգ/մ<sup>3</sup>/ - 0,65+0,85:
- Նվազագույն ջերմատվությունը – 7920 կկալ/մ<sup>3</sup>
- Խոնավության և ծանր ածխաջրածինների ցողի կետերի ջերմաստիճանը և մեխանիկական խառնուրդների պարունակությունը ԱԳԿԿ մուտքին՝ ըստ OCT 51.40
- Մուտքին գազի ջերմաստիճանը՝ +30o-ից -5o
- Մուտքին գազի ճնշումը՝ 0,4+0,6 ՄՊա /բացարձակ/
- Մեքենայի բալոններում գազի ամենաբարձր ճնշումը՝ 19,6 ՄՊա,
- Մեքենան գազով լիցքավորելու ծավալը՝ 60 նմ<sup>3</sup> - ԳԱԶ մակնիշի ավտոմեքենաների համար 80 նմ<sup>3</sup> - ՋԻԼ մակնիշի ավտոմեքենաների համար,
- Մեքենան գազով լիցքավորելու հաշվարկային ծավալը՝ 70 նմ<sup>3</sup>,
- Մեկ մեքենայի լիցքավորման ժամանակը, ներառյալ օժանդակ գործողությունները՝ 10-12 րոպե է:

ԱԳԼՃԿ-ի աշխատանքի ռեժիմը շուրջօրյա է՝ առանց վերանորոգման համար աշխատանքների լրիվ դադարեցման: Լրիվ զբաղվածության դեպքում տարվա մեջ աշխատանքի հաշվարկային օրերի քանակը 360 աշխատանքային օր է:

Տարողությունների կառուցվածքը թույլ է տալիս իրականացնել լիցքավորման փողրակների ինչպես աջ, այնպես էլ ձախ տեղադրվածություն ունեցող մեքենաների լիցքավորումը: Այդ պատճառով էլ ԱԳԼՃԿ-ի տարածքում ավտոմոբիլների հանդիպակաց երթևեկություն չպետք է լինի:

**1.6.1 Տեխնոլոգիական գործընթացի համառոտ նկարագիր**

Նախագծված է մնական գազով աշխատող ավտոմեքենաների գազալիցքավորման ճնշակային կայանի՝ «ԱԳԼՃԿ»-ի գազամատակարարման նախագիծ:

Նախագիծը կատարված է համաձայն շինարարական նորմերի և կանոնների՝ ՀՀՇՆ -IV-12.03.03-04 :

Գազալիցքավորման ճնշակային կայանում տեղադրված են "BOPEL" V=500մ /ժամ, P=250մթն տիպի՝ 4 հատ ճնշակային տեղակայումներ:

Բնական գազը մ/ճ գազատարից տրվում է ճնշակներին, որոնք համալրված են գազի հովացման սարքավորումներով: Հովացման սարքավորումները աշխատում են օդով : Արդեն հովացված ք/ճ գազը տրվում է լցասյուններին և ստորգետնյա կուտակիչներին՝ V=400լ 10հատ:

Ճնշակային տեղակայումները ապահովված են ավտոմատ կառավարման համակարգերով:

Ավտոմատ կառավարման համակարգը դադարեցնում է ճնշակի աշխատանքը, եթե՝

-Դադարել է հովացման ջրի մատակարարումը

-Իջել է յուղի ճնշումը

-Շինությունում բարձր է գազի կոնցենտրացիան

-Էլ. համակարգում առաջացել է անսարքություն

-Սեղման աստիճաններից հետո գազի պարամետրերը չեն համապատասխանում տրված պահանջներին:

Կուտակիչներում գազի ճնշումը կարգավորվում և պահպանվում է ավտոմատ եղանակով:

### 1.7 *Ջրային պաշարների պահպանություն*

Ավտոգազալցաճնշակայանի ջրամատակարարումը իրականացվելու է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ընկերության կողմից, հողամասից մոտ 930մ հեռավորությամբ անցնող d=100մմ ջրաօձից, համաձայն տրված տեխնիկական պայմանների: Ջուրն օգտագործվելու է կենցաղային նպատակով:

Հակահրդեհային ցանցի հաշվարկային պահանջվող ջրի քանակության համար, անհրաժեշտ է նախատեսվել է հակահրդեհային ջրամբար 100լիտր տարողությամբ:

Տարածքում կոյուղու ցանցը բացակայում է: Կայանում կառաջանան միայն կենցաղային կեղտաջրեր, որի համար կնախատեսվի անջրթափանց սեպտիկ /բետոնապատ/ հոր 8.75 քմ մակերեսով, խորությունը՝ 2.5մ:

#### 1.7.1 *Տնտեսական և կենցաղային կարիքների ջրօգտագործման ծավալները*

Աշխատողների կենցաղային կարիքների և խմելու նպատակով ջրօգտագործումը.

$$V_2 = N_1 K_2 T_3 + N_2 K_2 T_4, \text{ որտեղ.}$$

$N_1$  - հերթափոխի պետ – 6 հոգի,

$K_2$  - համապատասխան ջրօգտագործման նորման – 0.016 խմ,

$N_2$  - սպասարկող անձնակազմ – 21 հոգի

$K_3$  - համապատասխան ջրօգտագործման նորման – 0.025 խմ,

$T_3$  - հաշվարկվող աշխատանքային օրերի քանակը – 360

$T_4$  - հաշվարկվող աշխատանքային օրերի քանակը - 360

$$V_2 = 6 \times 0.016 \times 360 + 21 \times 0.025 \times 360 = 223.65 \text{ խմ/տարի:}$$

Կորուստները կազմում են – 1.5 %, տարեկան – 3.35 խմ

Արտահոսքը կկազմի – 220.3 խմ/տարի:

Օրական ջրի ծախսը կկազմի 0.61 խմ/օր:

Ջրօգտագործման և ջրահեռացման հաշվեկշիռը՝

- Ընդամենը ջրօգտագործում – 223.65 խմ/տարի
- Կորուստ – 3.35 խմ
- Ընդամենը արտահոսք - 220.3 խմ/տարի:

### 1.7.2 Ջրահեռացում

Գազալցակայանում արտադրական հոսքաջրեր չեն առաջանում: Կայանում առաջանում են միայն կենցաղային կեղտաջրեր, որոնք սանիտարական-սարքերից ինքնահոս հավաքվում և հեռացվում է ներքին ցանցի միջոցով դեպի կոյուղու բակային ցանց: Բակային ցանցի միջոցով ուղղվում են կեղտաջրերի անջրթափանց հոր: Հորի ծավալը կազմում է 21.875 խմ: Կապված լցվելու հաճախականությունից սեփտիկ հորից կենցաղային կեղտաջրերը հատուկ մեքենաներով կհեռացվեն կոյուղու ցանց:

### 1.8 Արդյունաբերական թափոններ

Նախատեսվող գազալիցքավորման կայանում արտադրական թափոններ առաջանում են՝ մուտքային սեպարատորներում - գազը մաքրվում է մեխանիկական մասնիկներից և խոնավությունից, խոնավագտիչում - գազը մաքրվում է կաթիլային խոնավությունից, գտիչներում - գազը մաքրվում է յուղից:

Թափոնների քանակը կազմում է 180 կգ/տարի և կազմված են հետևյալ նյութերից.

սիլիկատ - 60 կգ,

յուղ - 120 կգ,

Կոմպրետորային բաժնում տեղադրված յուղորսիչներում կլանված յուղը հավաքվում է մետաղյա տարողություններում, պահվում է փակ շինությունում և օգտագործվում է գազայցակայանի սարքավորումների շարժիչների յուղման նպատակով:

Թափոնները պատկանում են վտանգավորության III դասին: Բաղկացած են մեխանիկական խառնուրդներից, ջրից, յուղից: Թափոնների ծածկագիրն է՝ 5410021102033: Պահվում են հատուկ մետաղական տարաներում:

Օգտագործված խոնավակլանիչը («Օդի և գազի չորացման ընթացքում օգտագործված սիլիկագել՝ ծածկագիր 3147050101995, վտանգավորության 3-րդ դաս») չի պարունակում որևէ տոկսիկ նյութ և սանձառայության թույլատրությունից հետո կարող է տեղափոխվել քաղաքային աղբանոց:

### 1.9 *Էլեկտրամատակարարում*

Էլեկտրամատակարարման նախագիծը կատարված է համաձայն գոյություն ունեցող նորմերի և կանոնների:

Տարածքում նախատեսվում է կառուցել 5x5մ առանցքային չափսերով ենթակայան:

Նախագծով նախատեսված է ճնշակայանի էլեկտրասնուցում, օպերատորային մասնաշենքի լուսավորություն, լցայունակների լուսավորություն, արտաքին լուսավորություն, շանթապաշտպանություն և հողանցում:

Ենթակայանը աշխատելու է չոր եղանակով, ինչը բացառում է բանեցված յուղերի, քսայուղերի առաջացում:

Տեխնիկական ցուցանիշներ՝



NN n/n	ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՄԱԿՆԻՇ	ՉԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐ	ՔԱՆԱԿ	
	<b>1. ԷԼԵԿՏՐԱՍՆՈՒՑՈՒՄ</b>				
1	Մալուխ ուժային	BBԵ-4x240	մ	160	
2	Մալուխ ուժային	BBԵ-4x10	մ	140	
3	Մալուխ ուժային	BBԵ-4x6	մ	40	
4	Մալուխ ուժային	BBԵ-4x4	մ	10	
5	Մալուխ ուժային	BBԴԻԴ-4x240	մ	96	
6	Մուտքի բլոկ	ԵՄ8254-42 A2	հատ	4	
7	Մետաղական խողովակ	Φ100մմ	մ	350	
8	Խրամուղու փորում		խմ	70	
9	Չետադարձ լցում		խմ	70	
	<b>2. ԾՆՇԱԿԱՅԻՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԼՈՒՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ</b>				
1	Բաշխիչ վահան	4 տեղանոց	հատ	1	
2	Եռաֆազ ավտոմատ անջատիչ	400Վ, 25Ա	հատ	1	
3	Միաֆազ ավտոմատ անջատիչ	230Վ, 16Ա	հատ	3	
4	Լուսատու	B3Դ-200"	հատ	12	
5	Լուսատու առաստաղային	LED 18Վտ	հատ	2	
6	Պատի լուսատու	ԵՄԿ-60	հատ	3	
7	Միաբևեռ միատեղ անջատիչ փակ հաղորդագծի համար	250Վ, 6Ա	հատ	1	
8	Միաբևեռ միատեղ հերմետիկ անջատիչ բաց հաղորդագծի համար	250Վ, 10Ա	հատ	1	
9	Միաբևեռ երկտեղ հերմետիկ անջատիչ բաց հաղորդագծի համար	250Վ, 10Ա	հատ	2	
10	Երկբևեռ վարդակ փակ հաղորդագծի համար	250Վ, 10Ա	հատ	3	
11	Բաժանման տուփ փակ հաղորդագծի համար	ԿՈ1	հատ	4	
12	Ներդիր բաժակ անջատիչներ և վարդակներ տեղադրելու համար	ԿՈ2	հատ	4	
13	Հաղորդալար	ՈՈԲ-2x2.5	մ	130	
14					
15					

NN n/n	ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՄԱԿՆԻՇ	ՉԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐ	ՔԱՆԱԿ	
<b>3. ՕՊԵՐԱՏՈՐԱԿԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ</b>					
1	Բաշխիչ վահան	8 տեղանոց	հատ	1	
2	Եռաֆազ ավտոմատ անջատիչ	400Վ, 25Ա	հատ	1	
3	Միաֆազ ավտոմատ անջատիչ	230Վ, 16Ա	հատ	4	
4	Լուսատու առաստաղային	LED 18Վտ	հատ	19	
5	Պատի լուսատու	ԵՄԻ-60	հատ	3	
6	Միաբևեռ միատեղ անջատիչ փակ հաղորդագծի համար	250Վ, 6Ա	հատ	8	
7	Միաբևեռ միատեղ հերմետիկ անջատիչ բաց հաղորդագծի համար	250Վ, 10Ա	հատ	3	
8	Երկբևեռ վարդակ փակ հաղորդագծի համար	250Վ, 10Ա	հատ	14	
9	Բաժանման տուփ փակ հաղորդագծի համար	ԿՈ1	հատ	9	
10	Ներդիր բաժակ անջատիչներ և վարդակներ տեղադրելու համար	ԿՈ2	հատ	22	
11	Հաղորդալար	ՈՈԲ-2x4	մ	25	
12	Հաղորդալար	ՈՈԲ-2x2.5	մ	100	
13	Հաղորդալար	ՈՈԲ-2x1.5	մ	65	
<b>4. ԼՅԱՍՅՈՒՆԱԿՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ</b>					
1	Լուսարձակիչ հալոգեն լամպով համալիր	100Վտ	հատ	20	
2	Մալուխ	ԵԵԴ-2x2.5	մ	115	
<b>5. ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ</b>					
1	Լուսատու	PKY 01-250	հատ	6	
2	Լամպ սնդիկային	ՃՔԼ-250	հատ	6	
3	Մալուխ ուժային	ԵԵԵ-2x6	մ	45	40մ - հող 5մ - կոնստր.
4	Մալուխ ուժային	ԵԵԵ-2x4	մ	60	հող
5	Հենասյուն մետաղական	Փ100մմ	հատ	6	
6	Բարձակ մեկճյուղանի		հատ	6	
7	Բետոն		խմ	8.0	

NN n/n	ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՄԱԿՆԻՇ	ՉԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐ	ՔԱՆԱԿ	
<b>3. ՕՊԵՐԱՏՈՐԱԿԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ</b>					
1	Բաշխիչ վահան	8 տեղանոց	հատ	1	
2	Եռաֆազ ավտոմատ անջատիչ	400Վ, 25Ա	հատ	1	
3	Միաֆազ ավտոմատ անջատիչ	230Վ, 16Ա	հատ	4	
4	Լուսատու առաստաղային	LED 18Վտ	հատ	19	
5	Պատի լուսատու	ԵՄԻ-60	հատ	3	
6	Միաբևեռ միատեղ անջատիչ փակ հաղորդագծի համար	250Վ, 6Ա	հատ	8	
7	Միաբևեռ միատեղ հերմետիկ անջատիչ բաց հաղորդագծի համար	250Վ, 10Ա	հատ	3	
8	Երկբևեռ վարդակ փակ հաղորդագծի համար	250Վ, 10Ա	հատ	14	
9	Բաժանման տուփ փակ հաղորդագծի համար	ԿՈ1	հատ	9	
10	Ներդիր բաժակ անջատիչներ և վարդակներ տեղադրելու համար	ԿՈ2	հատ	22	
11	Հաղորդալար	ՈՈԲ-2x4	մ	25	
12	Հաղորդալար	ՈՈԲ-2x2.5	մ	100	
13	Հաղորդալար	ՈՈԲ-2x1.5	մ	65	
<b>4. ԼՅԱՍՅՈՒՆԱԿՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ</b>					
1	Լուսարձակիչ հալոգեն լամպով համալիր	100Վտ	հատ	20	
2	Մալուխ	ԵԵԴ-2x2.5	մ	115	
<b>5. ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ</b>					
1	Լուսատու	PKY 01-250	հատ	6	
2	Լամպ սնդիկային	ՃՔԼ-250	հատ	6	
3	Մալուխ ուժային	ԵԵԵ-2x6	մ	45	40մ - հող 5մ - կոնստր.
4	Մալուխ ուժային	ԵԵԵ-2x4	մ	60	հող
5	Հենասյուն մետաղական	Փ100մմ	հատ	6	
6	Բարձակ մեկճյուղանի		հատ	6	
7	Բետոն		խմ	8.0	

NN n/n	ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՄԱԿՆԻՇ	ՉԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐ	ՔԱՆԱԿ	
8	Փոսի փորում		խմ	8.0	
9	Արտահանում		խմ	8.0	
10	Խրամուղու փորում		խմ	42.0	
11	Հետադարձ լցում		խմ	42.0	
	<b>6. ՇԱՆԹԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ և ՀՈՂԱՆՑՈՒՄ</b>				
1	Հենայուն մետաղական		հատ	6	
2	Անկյունապողպատ L=5մ	50x50x5մմ	հատ	40	
3	Շերտապողպատ	40x4մմ	մ	280	
4	Բետոն		խմ	12.0	
5	Փոսի փորում		խմ	36.0	
6	Հետադարձ լցում		խմ	36.0	
7	Արտահանում				

**1.10 Աղմուկ և թրթռում:**

ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է N2-III-11.3՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» սանիտարական նորմերով: Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում:

Շինարարական աշխատանքների իրականացման և շահագործման փուլերի ընթացքում հիմնական աղմուկի աղբյուր է հանդիսանալու ավտոտրանսպորտային միջոցները:

Շինարարական աշխատանքների ընթացքում աղմուկի մակարդակի չգերազանցելու նպատակով իրականացվելու են համապատասխան մեղմացնող միջոցառումներ:

Հաշվի առնելով որ գազալցակայանը բնակելի տարածքներից գտնվում է զգալի հեռավորության վրա, ինչպես շինարարության, այնպես էլ շահագործման փուլերում աղմուկի մակարդակը զգալի չէ և հարակից տարածքում չի գերազանցի սանիտարական նորմերը:

**2. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

**2.1 Ընդհանուր տեղեկություններ**

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնք Պտղնի բնակավայրի, 23-րդ փողոց 4 հողամաս հասցեում:

**Գեոմորֆոլոգիական տեսակետից** տարածքի սահմաններում ռելիեֆի հիմնական տարրերն են հանդիսանում գեոմորֆոլոգիական տեսակետից տարածաշրջանը բնորոշվող ռելիեֆային հիմնական տարրերն են Կոտայքի հրաբխային սարավանդի լանջերը: Ուսումնասիրվող տարածքը գտնվում է մարզկենտրոնից 37 կմ հարավ-արևմուտք, Հրազդան գետի բարձրադիր ափին: Ծովի մակարդակից բարձրությունը կազմում է 1330մ:

**Երկրաբանական կառուցվածքում** Ուսումնասիրվող տարածքի երկրաբանական կտրվածքում մասնակցում են չորրորդական և նեոգեն ժամանակների ապարներ, որոնց արտաքին շերտը ծածկված են դելյուվիալ և պրոլյուվիալ ծագման նստվածքներով, :

**Հիդրոերկրաբանական տեսակետից** Հիդրոերկրաբանական տեսակետից ուսումնասիրվող տարածքը՝ կախված երկրաբանական կտրվածքից, ստորերկրյա ջրերի սնուցումը կատարվում է հալոցքային և մթնոլորտային տեղումների ջրերի ներծծման հաշվին: Ըստ ֆոնդային տվյալների մինչև 7մ խորությամբ ստորգետնյա ջրեր չեն բացահայտվել:

**Ֆիզիկաերկրաբանական** վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն՝ մեր ուսումնասիրվող տարածքում բացակայում են:

**Շրջանի սեյսմիկ պայմանները** Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀԾՆ -20.04.2020թ.-ի, տեղազնվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների  $A_{max} = 0.4g$  արագացմամբ, 9 և ավելի բալլ սեյսմիկությամբ

**Երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը**

Տարածքի երկրաբանական կտրվածքը ուսումնասիրվել է ակնադիտական եղանակով, բնական մերկացումների և արխիվային նյութերի հիման վրա: Ուսումնասիրվող տարածքում առանձնացվել է գրունտների հետևյալ տեսակները:

**Շերտ 1 Շերտ-1** Լիցքեր կազմված . խճից, խճաքարերից, բազալտներից: Ժամանակակից տեխնածին առաջացումներ են:Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇԽՈՒ IV-5-82-ի (24a) II կարգ է:

**Շերտ-2 Խճաքարային գրունտ** ավազակավային լցոնով, շագանակագույն, ծակոտկեն և խոռոչավոր, ավազային և խճային կառուցվածքի, խճի և տեղ-տեղ մանրաբեկորների պարունակությամբ: Չորրորդական հասակի դելյուվիալ-պրոլյուվիալ առաջացում են: Գրունտներն ըստ շահագործման դժվարության համաձայն ՇԽՈՒ IV-5-82-ի (13) IV կարգ է:

**Շերտ 3 Բեկորային Բազալտներ** ամուր, բացից մինչև գորշ մոխրագույն, տեղ-տեղ վարդագույն, ճեղքավոր, ծակոտկեն, շատ հաճախ խոռոչավոր, շատ հազվադեպ խարամացված, տեղ-տեղ բեկորա-խճաքարային նստվածքներ մոտ 40% ավազա-խճավազային լրացումով: Չորրորդական հասակի հրաբխային ապարներ են: Գրունտներն ըստ շահագործման դժվարության համաձայն ՇՀՈՒ IV- 5-82-ի (6e) VI կարգ է:

**Շերտ-4 Խարամացված Բազալտներ** կարմրավուն և մոխրագույն, ծակոտկեն և խոռոչավոր, ավազային և խճային կառուցվածքի, բազալտների խճի և տեղ-տեղ մանրաբեկորների պարունակությամբ: Նեոգենի ժամանակաշրջանի, վերին պլիոցեն դարակարգի հրաբխային ապարներ են: Գրունտներն ըստ շահագործման դժվարության համաձայն ՇՀՈՒ IV-5-82-ի (6r) IV կարգ է:

**2.2 Կլիման**

Կլիմայական պայմանների նկարագրությունում, քանի որ Առինջ համայնքը ընդգրկված չէ ՀՀ շինարարական կլիմայաբանությունում (ՀՀՇՆ II-7.01-2011) և հաշվի առնելով Պտղնի բնակավայրի հեռավորությունը (9 կմ) Երևան քաղաքից օգտագործվում են Երևան քաղաքի «Արաբկիր» օդերևութաբանական կայանի (1113 մ) կլիմայական դիտարկումների տվյալները (ՀՀՇՆ II-7.01-2011, տես Աղ. 3):

Ընդհանուր առմամբ կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում՝ շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժումով:

Տեղանքի կլիմայական պայմանները բերված են ըստ Երևան-«Արաբկիր» օդերևութաբանական կայանի տվյալների:

Ջերմաստիճանի բացարձակ մինիմումը ոչ ցածր է քան -30 °C, բացարձակ մաքսիմումը հասնում է +42 °C: Օդի միջին ջերմաստիճանները ըստ ամիսների Երևան քաղաքի հարավային արդյունաբերական շրջանի համար բերված են աղյուսակ 2.1-ում «Շինարարական կլիմայաբանություն» ՇՀՈՒ II-7.01-2011 տվյալների համաձայն:

**Օդի միջին ջերմաստիճանը, °C**

Աղյուսակ 2.1.

Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների												միջին տարեկա ն
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
<b>-2.9</b>	<b>-0.8</b>	<b>5.1</b>	<b>11.8</b>	<b>16.3</b>	<b>20.8</b>	<b>24.5</b>	<b>24.2</b>	<b>19.9</b>	<b>13.1</b>	<b>6.4</b>	<b>0.1</b>	<b>11.5</b>

Օդի հարաբերական խոնավության բնութագիրը ըստ Երևան-«Արաբկիր» մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 2.2-ում:

Օդի հարաբերական խոնավությունը, %

Աղյուսակ 2.2.

Միջինը ըստ ամիսների, %												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
<b>77</b>	<b>73</b>	<b>61</b>	<b>57</b>	<b>59</b>	<b>53</b>	<b>49</b>	<b>50</b>	<b>51</b>	<b>60</b>	<b>70</b>	<b>76</b>	<b>61</b>

Տեղումների բնութագիրը ըստ Երևան-«Արաբկիր» օդերևութաբանական կայանի տվյալների բերված է աղյուսակ 2.3-ում:

Տեղումների բնութագիրը

Աղյուսակ 2.3.

Տեղումների քանակը _____ միջին _____, մմ												տարեկան
մաքսիմալ օրական												
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
<u>28</u>	<u>31</u>	<u>38</u>	<u>48</u>	<u>55</u>	<u>29</u>	<u>16</u>	<u>8</u>	<u>11</u>	<u>31</u>	<u>30</u>	<u>28</u>	<b>353</b>
22	28	26	34	47	47	34	22	47	34	30	26	<b>47</b>

Քամու ակտիվությունը ռեգիոնում ըստ Երևան-«Արաբկիր» մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 2.4-ում:

Քամու բնութագիրը

Աղյուսակ 2.4.

Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիությունը, %							
		ըստ ուղղությունների							
		Միջին արագությունը, մ/վ							
		Հյուսիս-սային (Հս)	Հյուսիս-Արեվելյան (ՀսԱրլ)	Արեվելյան (Արլ)	Հարավ-Արեվելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավ-Արևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիս-Արևմտյան (ՀսԱրմ)
2	3	4	5	6	7	8	9	10	11
<b>889,7</b>	հունվար	<b>13</b>	<b>29</b>	<b>8</b>	<b>7</b>	<b>14</b>	<b>20</b>	<b>6</b>	<b>3</b>
		<b>1,9</b>	<b>1,9</b>	<b>1,6</b>	<b>1,7</b>	<b>1,8</b>	<b>1,5</b>	<b>1,8</b>	<b>1,9</b>
	ապրիլ	<b>15</b>	<b>29</b>	<b>6</b>	<b>8</b>	<b>12</b>	<b>17</b>	<b>9</b>	<b>4</b>
		<b>3,1</b>	<b>2,6</b>	<b>2,3</b>	<b>2,2</b>	<b>2,5</b>	<b>2,4</b>	<b>2,5</b>	<b>2,5</b>
	հուլիս	<b>28</b>	<b>32</b>	<b>3</b>	<b>3</b>	<b>8</b>	<b>16</b>	<b>7</b>	<b>3</b>
		<b>6,0</b>	<b>4,8</b>	<b>1,7</b>	<b>1,7</b>	<b>1,7</b>	<b>1,7</b>	<b>2,0</b>	<b>2,6</b>
	հոկտեմբեր	<b>17</b>	<b>37</b>	<b>6</b>	<b>5</b>	<b>10</b>	<b>16</b>	<b>6</b>	<b>3</b>
		<b>2,9</b>	<b>2,5</b>	<b>2,0</b>	<b>1,9</b>	<b>1,7</b>	<b>1,9</b>	<b>1,9</b>	<b>2,0</b>

Արեգակնային փայլի տևողության, ճառագայթման ուժգնության բնութագիրը և ամպամած օրերի քանակը բերված են 2.5 – 2.7 աղյուսակներում:

Արեգակնային ճառագայթում (Երևան-Ագրո)

Աղյուսակ 2.5.

Գումարային ճառագայթում (ուղիղ + ցրված), որը մուտք է գործում հորիզոնական մակերևույթ անամպ երկինքի դեպքում, ՄՋ/մ <sup>2</sup>												Տարեկա ն գումարա յին
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
<b>325</b>	<b>391</b>	<b>637</b>	<b>799</b>	<b>963</b>	<b>955</b>	<b>965</b>	<b>858</b>	<b>673</b>	<b>532</b>	<b>349</b>	<b>293</b>	<b>7740</b>

Արեգակնային փայլի տևողությունը (Երևան “Ագրո”)

Աղյուսակ 2.6.

Տևողությունը ըստ ամիսների, ժամ												տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
<b>84</b>	<b>109</b>	<b>162</b>	<b>200</b>	<b>267</b>	<b>320</b>	<b>351</b>	<b>332</b>	<b>293</b>	<b>231</b>	<b>144</b>	<b>85</b>	<b>2578</b>

Ամպամած օրերի քանակը (Երևան “Ագրո”)

Աղյուսակ 2.7.

Ըստ ամիսների, օր												տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
<b>11</b>	<b>7</b>	<b>5</b>	<b>2</b>	<b>0,6</b>	<b>0,08</b>	<b>0</b>	<b>0,08</b>	<b>0,1</b>	<b>1</b>	<b>4</b>	<b>10</b>	<b>41</b>

Տարվա հաշվարկային կլիմայական պարամետրերը բերված են 2.8 – 2.9 աղյուսակներում:



Կլիմայական բնութագիրը տարվա ցուրտ ժամանակահատվածում, Երևան-Արաբկիր

Աղյուսակ 2.8.

Օդի ջերմաստիճանը, °C										Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Մթնոլորտային տեղումներ և գրունտի սառչման խորությունը		Քամի	
ամենա ցուրտ օրվա				ամենա ցուրտ հինգօրյակի				Տևողությունը (օր) միջին ջերմաստիճանը (°C) ժամանակահատվածում, երբ միջին օրական ջերմաստիճանը ոչ ավելի քան՝							
ապահովվածություն				միջինը ամենացուրտ ժամանակահատվածում	բացարձակ նվազագույնը	ամենացուրտ ամսվա միջին օրական ամպլիտուդա	0	8	10	միջին ամսական	միջին ամսական ժամը 15-ին	տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ	գերակշռող ուղղությունը դեկտեմբեր-փետրվար ամիսներին	հունվարին միջին արագություններից առավելագույնը, ըստ ռումբերի, մ/վրկ
0.98	0.92	0.98	0.92												
<b>-17</b>	<b>-16</b>	<b>-16</b>	<b>-15</b>	<b>-3,1</b>	<b>-21</b>	<b>6,4</b>	<b>-1.9</b>	<b>1.1</b>	<b>1.9</b>						

Կլիմայական պարամետրերը տարվա տար ժամանակահատվածում, Երևան- Արաբկիր

Աղյուսակ 2.9.

Օդի ջերմաստիճանը, °C										
ապահովվածություն		Բացարձակ առավելագույնը	ամենատաք ամսվա միջին առավելագույնը	ամենատաք ամսվա միջին օրական ամպլիտուդա	Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Մթնոլորտային տեղումներ, մմ		Քամի	
0.95	0.99				միջին ամսական	միջին ամսական ժամը 15-ին	տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին	օրական մաքսիմում	գերակշռող ուղղությունը հունիս-օգոստոս ամիսներին	հուլիսին միջին արագություններ ից նվազագույնը, ըստ ռումբերի, մ/վրկ
<b>33</b>	<b>33</b>	<b>41</b>	<b>31,8</b>	<b>13,3</b>	<b>49</b>	<b>35</b>	<b>198</b>	<b>47</b>	ՀվԱրմ	<b>17</b>

### 2.3 Օդային ավազան


Օդային ավազանի աղտոտվածության մոնիտորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօթերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» (ՀՄԿ) ՊՈԱԿ-ի կողմից: Քանի որ ՀՀ Կոտայքի մարզի Պտղնի բնակավայրում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումները բացակայում են, և հաշվի առնելով Առինջ բնակավայրը գտնվում է անմիջապես Երևան քաղաքի հարևանությամբ (հեռավարությունը մոտ 9 կմ), Առինջ համայնքում օդի էլակետային վիճակը կարելի է նկարագրել Երևան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշներով:

Երևան քաղաքում կատարվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 45 դիտակետ և 5 դիտակայան: 2022 թվականին Երևան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները: Իրականացված դիտարկումների 31%-ում դիտվել են փոշու, 29%-ում՝ ազոտի երկօքսիդի, 3%-ում՝ ծծմբի երկօքսիդի, 0.1%-ում՝ գետնամերձ օզոնի գերազանցումներ համապատասխան ՍԹԿ-ներից, ինչը կարող է պայմանավորված լինել ինչպես բնակլիմայական պայմաններով և աղտոտման աղբյուրներով, այնպես էլ կանաչ տարածքների սակավությամբ: Քաղաքում մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում տրանսպորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը:


2021 թվականի տվյալների համաձայն քաղաքում անշարժ աղբյուրներից արտանետված վնասակար նյութերում գերակշռում են ածխաջրածինները, ածխածնի օքսիդը, փոշին, ազոտի օքսիդները և ծծմբային անհիդրիդները:

Աղյուսակ 14. Երևան քաղաքի մթնոլորտային օդի դիտարկումների արդյունքները, 2022թ.


Որոշվող միացություն (դիտակայանի քանակ)	Դիտարկված առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ <sup>3</sup> (դիտակայանի համար)	ՍԹԿ-ից գերազանցումների քանակ		Միջին տարեկան կոնցենտրացիա, մգ/մ <sup>3</sup>	ՍԹԿ միջին օրական, մգ/մ <sup>3</sup>
		>1 ՍԹԿ	>5 ՍԹԿ		
Ծծմբի երկօքսիդ (5)	0.090 (դիտ. N18)	52	0	0.022	0.05
Ազոտի երկօքսիդ (5)	0.148 (դիտ. N7)	367	0	0.029	0.04
Փոշի (5)	1.805 (դիտ. N8)	560	15	0.147	0.15
Գետնամերձ օզոն (5)	0.030 (դիտ. N8)	1	0	0.006	0.03




Գծապատկեր 18. Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիայի փոփոխությունը 2021-2022 թթ.




Գծապատկեր 19. Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիայի փոփոխությունը 2021-2022 թթ.




Գծապատկեր 20. Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիայի փոփոխությունը 2021-2022 թթ.




Գծապատկեր 21. Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի միջին ամսական կոնցենտրացիայի փոփոխությունը 2021-2022 թթ.



Գծապատկեր 22. Երևան քաղաքի մթնոլորտային օդում աղտոտիչների միջին տարեկան կոնցենտրացիայի փոփոխությունը և անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետումները





Սույն հայտում նախատեսված միջոցառումների արդյունքում՝ օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի սպասվում:

## 2.4 Ջրային ռեսուրսներ

«Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշմամբ ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

ՀՀ տարածքում ջրերի կառավարումը կատարվում է 6 գետավազանային կառավարման տարածքների միջոցով:

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Դիտարկվող տարածքում հիմնական ջրային ռեսուր է հանդիսանում Հրազդան գետը, որը հոսում է Հրազդանի կիրճով՝ Ջովունի գյուղին հարող տարածքով: Հրազդան գետի Արզնի ՀԷԿ-ից ներքև հատվածներում ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս)՝ պայմանավորված նիտրատ իոնով, վանադիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և հանքայնացումով:

Տարածաշրջանով անցնում է Արզնի-Շամիրամի ջրանցքը, որը բաց տեսակի ջրատար է, սկիզբ է առնում Հրազդան գետից մոտ 1400 մ.ձ.մ. մակարդակից և ավարտվում 1000 մ.ձ.մ. բարձրության վրա:

Նախատեսվող գործունեությունը ջրային ավազանի աղտոտվածությունը չի ավելացնի, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումներ հնարավոր ազդեցությունների նվազեցմանն ուղղված:


Նախատեսվող գործունեության տարածքը պատկանում է Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքին:

Հրազդանի ՋԿՏ-ը ներառում է Հրազդանի և Քասախի գետավազանները: Այստեղ ջրային ռեսուրսների աղտոտման աղբյուրներ են հանդիսանում հիմնականում կոմունալ- կենցաղային կեղտաջրերը: 2022 թվականին Հրազդանի ՋԿՏ-ում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է 20 դիտակետում, որոնցից 5%- ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս, 35%-ում՝ 3-րդ դաս, 5%-ում՝ 4-րդ դաս և 55%-ում՝ 5-րդ դաս: 2022 թվականին ջրի որակի էական փոփոխություն չի նկատվել, բացառությամբ Քասախ գետի գետաբերանի դիտակետի, որտեղ ջրի որակը 4-րդ դասից դարձել է 3-րդ դաս: Աղտոտված գետերից են Քասախը,



Գեղարոտը, Հրազդանը, Գետառը և Ծաղկաձորը: Ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 32 դիտակետում, որից 13- ում՝ նաև որակի մոնիթորինգ: 2021 թվականին այս ՋԿՏ-ից ջրօգտագործումը կազմել է 1183.3 մլն մ<sup>3</sup>, որից 38%-ը բաժին է ընկնում մակերևութային, 62%-ը՝ ստորերկրյա ջրերին: Ջրօգտագործումն իրականացվել է հիմնականում ձկնաբուծության (47%), ոռոգման (39%), արտադրական (9%) և խմելու (5%) նպատակներով:

**ՀՀ Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը / 2022 թվական**



## 2.5 Հոդերի նկարագիրը

### Հոդերը

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- ❖ Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- ❖ Կիսասանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- ❖ Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ակալիացած աղակալած:

Հողային ծածկույթի աղտոտման աղբյուրներ կարող են հանդիսանալ՝

- մետաղաձուլական գործարանները,
- արդյունաբերական և կենցաղային թափոնները,
- ժամանակակից գյուղատնտեսությունը,
- տրանսպորտը:

Մարդու գործունեության արդյունքում միջավայր թափանցած ծանր մետաղների մեծ մասը կուտակվում է հողում: Այնուհետև դրանց մի մասը, անցնելով ջրային միջավայր, կլանվում է բույսերի կողմից և հայտնվում սննդային շղթայում: Հողի արդյունաբերական աղտոտման հիմնական աղբյուրներն են մետաղաձուլական գործարանների և արդյունաբերական այլ ձեռնարկությունների թափոնները: Նման աղտոտումները կարող են առաջացնել հողի աղտոտվածություն ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ, վանադիում և այլն) և ցիանական միացություններով:

Հողի աղտոտման աղբյուրներից մեկը մթնոլորտն է: Մթնոլորտի վնասակար նյութերը նստում են հողի մակերեսին, թափանցում են գրունտային ջրերի մեջ, իսկ դրանց մի մասն էլ փոշու ձևով վերադառնում է մթնոլորտ:

Մարդու և կենդանիների առողջության վրա բացասաբար են ազդում պարարտանյութերի բոլոր խմբերը, մասնավորապես քլոր պարունակող և ֆոսֆորական պարարտանյութերը:

Ծանր մետաղների կուտակումը հողում կատարվում է ավելի արագ տեմպերով, քան հեռացումն ու չեզոքացումը, որը տևում է հարյուրավոր, նույնիսկ հազարավոր տարիներ:

Գյուղատնտեսական աղտոտման հիմնական աղբյուրներն են՝ հանքային պարարտանյութերը, թունաքիմիկատները, անասնապահական համալիրները: Հանքային պարարտանյութերի կանոնների խախտման դեպքում մեծանում է հողի թթվայնությունը, փոխվում է հողային օգտագործման օրգանիզմների տեսակային կազմը, խախտվում է նյութերի շրջապտույտը, քայքայվում է հողի կառուցվածքը:

Հիմնական աղտոտիչները և դրանց ազդեցությունը մարդու առողջության վրա

Հողային ծածկույթի վտանգավոր աղտոտիչներ են համարվում ծանր մետաղները:

Արսենը հանդիսանում է առաջին աստիճանի վտանգավոր տարր, որը խիստ վնասակար է շրջակա միջավայրի և մարդու առողջության համար: Արսենի միացությունները ևս վտանգավոր են: Այս տարրը կարող է կուտակվել մարդու վահանաձև գեղձում և առաջացնել էնդեմիկ գոբ: Արսենը թունավոր է նույնիսկ փոքր չափաբաժնով: Արսենի առկայությունն օրգանիզմում կարող է առաջացնել մի շարք հիվանդություններ՝ մաշկային ախտահարում, դիաբետ, սրտանոթային պաթոլոգիա և ուռուցք:

Ցինկը առաջին աստիճանի վտանգավորության տարր է: Ցինկի բարձր կոնցենտրացիաները բույսերում վտանգավոր են՝ հատկապես դրանցով սնվող կենդանիների համար (բրդաթափություն, կաղություն, նյութափոխության թուլացում, անեմիա):

Կապարը համարվում է առաջին աստիճանի վտանգավորության տարր: Կապարի բարձր պարունակությունը կարող է նկատվել արմատավոր բույսերում և այլ բուսական ծազման մթերքներում, որոնք աճում են արտադրական տարածքների հարևանությամբ տեղակայված հողատարածքներում և ճանապարհների եզրերին: Կապարի բարձր կոնցենտրացիաները կարող են առաջանալ հանքարդյունաբերությունից, էլեկտրակայանների աշխատանքից, գազով աշխատող տրանսպորտից: Կապարային թունավորումն առաջացնում է ազրեսիվություն, թերզարգացվածություն, ցրվածություն, գերակտիվություն, վարքագծի փոփոխություններ, լսողության նվազեցում:

Պղինձը և նիկելը հանդիսանում են երկրորդ աստիճանի վտանգավորության տարրեր, որոնք մարդու օրգանիզմի նորմալ գործունեության համար անհրաժեշտ միկրոտարրեր են: Սակայն այս մետաղների գերնորմտիվային պարունակությունը սննդի մեջ հանգեցնում է օրգանիզմի գործառույթների, այդ թվում նաև վերարտադրության և ժառանգականության խախտմանը:

Քրոմը երկրորդ աստիճանի վտանգավորության տարր է: Քրոմի պարունակության գերազանցումը հողում վատթարացնում է օրգանական նյութերի նիտրատացումը և կատարվում է քրոմի կուտակում բույսերում: Հողում քրոմի կոնցենտրացիայի նույնիսկ քիչ ավելացման դեպքում այն կարող է ունենալ խթանիչ ազդեցություն բույսերի աճի և բերքատվության բարձրացման վրա:

Մանգանը երրորդ աստիճանի վտանգավորության տարր է: Այն կարող է կուտակվել հողում, լճերում և ճահիճներում: Այս տարրը շատ արագ կլանվում և տարածվում է նաև բույսերում, որի բարձր կոնցենտրացիան նպաստում է ածխաջրածնային, սպիտակուցային և ֆոսֆատային նյութափոխանակության խախտմանը: Այն բացասաբար է ազդում հատկապես հացահատիկի գեներատիվ օրգանների ձևավորման, բեղմնավորման և աճի վրա, ինչը հանգեցնում է այդ բույսի կենսագործունեության ընկճմանը և ոչնչացմանը: Մանգանի կուտակումները մարդու օրգանիզմում առաջին հերթին անդրադառնում է կենտրոնական նյարդային համակարգի գործունեության վրա (դա արտահայտվում է հոգնածությամբ, քնկոտությամբ և հիշողության վատացմամբ), ախտահարում է թոքերը,

սրտանոթային և լյարդալեղային համակարգերը, առաջացնում է ալերգիկ և մուտագեն ազդեցություն:

Վանադիումը երրորդ աստիճանի վտանգավորության տարր է: Վանադիումի կուտակումը հողում կարող է հանգեցնել բույսերի բերքատվության նվազեցմանը, իսկ կուտակումները մարդու օրգանիզմում՝ առաջացնել որովայնի հատվածում տհաճ զգացողություններ, փորլուծություն, սրտխառնոց և ստամոքսի խանգարումներ, ինչպես նաև մաշկային հիվանդություններ, կանաչավուն լեզու, էներգիայի կորուստ և նյարդային համակարգի խնդիրներ:

**Հողի որակի նորմեր**



Հողերի որակի գիտահատումն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի համաձայն (Հավելված 3):

**Տվյալների ամփոփում**



2022 թվականի հողային ծածկույթի ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներն իրականացվել են Լոռի, Վայոց ձոր, Գեղարքունիկ, Տավուշ, Կոտայք, Արարատ, Սյունիք, Շիրակ և Արմավիրի մարզերում:

Մարզերի և քաղաքների հողերում մետաղների կոնցենտրացիաների համապատասխան ՍԹԿ-ներից գերազանցման վերաբերյալ տեղեկատվությունը բերված է աղյուսակ 29-ում, իսկ կոնցենտրացիաները՝ գծապատկերներ 128 և 129-ում:

Մարզ/ Քաղաք	Վանաղիում	Պղինձ	Ցինկ	Քրոմ	Նիկել	Արսեն	Կապար
	Գերազանցումը համապատասխան ՄԹԿ-ից, անգամ						
Տավուշ	1.3	14.7-35.0	5.9-8.4	7.3-16.2	8.0-10.3	4.0-19.5	-
Կոտայք	1.5-2.0	17.0-46.3	5.1-12.7	4.3-26.7	9.3-28	2.5-10	1.3-2.1
Արարատ	1.2	11.0-14.7	2.9-4.3	8.0-11.3	13.8-17.5	3.5-6.5	-
Վայոց ձոր	1.5-2.9	25.0-74.7	3.5-6.7	1.7-15.3	4.8-13.8	3.5-6.5	1.1-1.4
Լոռի	1.3-7.1	16.4-1760.3	2.6-55.9	1.7-16.2	2.9-19.3	2.5-37.9	1.1-27.6
Գյումրի	1.4-2.4	15.6-24.3	5.4-23.0	1.7-14.3	8.5-18.3	2.5-5	1.2-1.6
Վարդենիս	1.1-2.0	18.0-24.7	5.3-8.9	19.0-42.0	24.3-42	5.5-8.0	1.2-1.3
Մեծամոր	1.5	16.7	6.1	21.8	24.3	7.0	-
Արմավիր	1.1-2.5	20.7-28.7	6.8-9.7	14.2-65.2	32.5-41	4.0-6.5	1.4-2.4
Կապան	1.1-2.2	107.7-213.3	7.7-23.7	1.7-15.7	9.3-17	6.5-12	1.5-10.7
Քաջարան	1.5-1.6	230.3-966.0	6.3-18.5	1.7-7.0	7.0-7.3	10.0-11.5	1.6
Մեղրի	3.2	70.7	5.9	1.7	7.8	7.0	-
Ագարակ	1.8-2.7	140.3-220.3	5.1-11.0	1.7-8.8	4.8-10.5	3.0-5.0	1.3-1.4



Գծապատկեր 128. Որոշ մարզերի հողային ծածկություն մետաղների պարունակությունը, 2022թ.



Գծապատկեր 129. Որոշ քաղաքների հողային ծածկույթում մետաղների պարունակությունը

## 2.6 Կենսաբազմազանություն

Տարածաշրջանի կենսաբազմազանությունը ձևավորվել է ինչպես սեփական աշխարհագրական դիրքի, բնակլիմայական, ռելիեֆային և լանդշաֆտային պայմանների, այնպես էլ մերձավոր տարածքների ֆլորիստական շրջանների բուսական և կենդանական աշխարհների ազդեցության ներքո:

Բուսական աշխարհը սերտ կապված է բնակլիմայական, մորֆոլոգիական, աշխարհագրական և այլ պայմանների հետ, որոնք հստակեցնում են և կանոնավոր կերպով տարանջատում տարբեր տիպի ֆլորաների սահմանները: Համաձայն Ս. Դալի կենդանական աշխարհի տարածման սահմանները ավելի անորոշ են ու աղոտ, ավելի լայն և դժվար են սահմանազատվում շնորհիվ իրենց շարժունակության և ապրելաձևի առանձնահատկությունների (բնակալում, նստակյաց կամ չվող կենսակերպ, արտազոնալ բնակատեղերի առատություն):

Ինչպես բուսական, այնպես էլ կենդանական աշխարհի ներկայացուցիչների հիմնական մասը բնորոշ է միջին բարձրության լեռնային, տաք, չափավոր չորային կլիմայով տափաստանային լանդշաֆտային գոնային:

### 2.6.1 Բուսական աշխարհ

Բուսական աշխարհը ներկայացված է Գեղամա և Երևանյան ֆլորիստական շրջանների միջև ընկած սահմանային, միջին բարձրության լեռնային տափաստանային զոնայի տարածքներին բնորոշ բուսականության տեսակներով, որոնցում գերակշռում են հատիկա և հատիկա- տարազգի ներկայացուցիչները: Համաձայն նախկինում կատարված հետազոտությունների, այստեղ՝ անդեգիտա-բազալտային և տուֆա-լավային մայր ապարների վրա տարածված տարավացված տիպիկ և սովորական սևահողերով տափաստանային տարածքներում կարելի է հանդիպել մոտ 150 բուսատեսակ: Դրանցից, որպես դոմինանտ կամ բնորոշ տեսակներ կարելի է նշել Իժալեզվազգիներից - OPHIOGLOSSUM YULCATUM (իժալեզու հասարակ), նոճազգիներից - JUNICPERUS EXCELSA (գիհի բազմապտուղի), հովանոցազգիներից - OPOPAHAX PERSICUM (ճավշիր պարսկական), ցախակեռասազգիներից - SAMBUCUS TIGRANII (թանթրվենի Տիգրանի), ազգաթոփազգիներից - EMPERTRUM HERMAPHRODITUM (ակնաթուփ երկսեռ ) Festuca sulkata (շյուղախոտ ), Artemisia austriaca Jack. (բարձրավենյակ), Koeleria nitidula Vel. (կելերիա), Thymus-ի տեսակներ (ուրց), Aegilops cylindrical Host. (այծակն), Scabiosa virgata Grossh. (քոսքոսկ), Achillea micranta M.B. (հազարատերևուկ) և այլն:

Մարդու գործունեության զարգացմանը զուգընթաց (հողերի գյուղատնտեսական օգտագործում, անասունների արածացում, տնտեսական գործունեություն և այլն) որպես կանոն կրճատվում է լանդշաֆտային զոնայի տեսակների ինչպես կազմը, այդպես էլ քանակը՝ ընդհուպ մինչև որոշ տեսակների իսպառ վերացումը: Մասնագետների կարծիքով այսօր Հայաստանում պահպանության կարիք ունի ֆլորայի տեսակների մոտ 50 տոկոսը:

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է զարգացած համայնքային միջավայրում, ուստի տեղանքում չկան որևէ էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանական տեսակներ: Տարածքով անցնող միգրացիոն ուղիները՝ տարածքի և հարակից վայրերի յուրացված և ուրբանացված լինելու պատճառով նույնպես բացակայում են:

Հողամասը որոշ հատվածներում ներկայացված է ինքնաբերաբար աճած խոտածածկով:

### 2.6.2 Կենդանական աշխարհ

Նկարագրվող տարածքում տարածված են միջին բարձրության (մոտ 1600 մ ծովի մակերևույթից բարձր) լեռնային տափաստաններին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներ: Մակայն այստեղ հանդիպում են նաև արտազոնալ բնակավայրերին (կմախքային սարեր, քարաթափեր, ցանքեր, այգիներ, բնակավայրեր) բնորոշ տեսակներ: Համաձայն հրատարակված տվյալների, այս լանդշաֆտային զոնայում տարածված են 113 տեսակ ողնաշարավոր կենդանիներ (որոնցից 82-ը՝ հանդիպում են նաև արտազոնալ բնակատեղերում), այդ թվում՝ 28 (20) կաթնասուն, 67 (41)՝ թռչուն, 15 (8)՝ սողուն և 3 (3)՝ երկկենցաղ: Կաթնասունները առավել կերպով ներկայացված են կրծողներով, որոնց մի մասը վարում է ստորգետնյա կենսակերպ: Թռչունները ներկայացված են բաց

տարածքներին բնորոշ տեսակներով: Սողունները և երկկենցաղները փոքրաքանակ են: Գարնան և աշնան սեզոններին այստեղ հանդիպում են բազմաթիվ չվանցող տեսակներ:

Տվյալ տարածքի դոմինանտ և բնորոշ տեսակներից կարելի է նշել Հայաստանում ամենուրեք տարածված *Crocidura* (սպիտակատամիկ), *Canis lupus* (գայլ), *Vulpes vulpes L.* (աղվես), *Cricetus auratus Nat.* (գերմանամուկ), *Mucrotus arvalis Pall.* (դաշտամուկ), *Perdix perdix L.* (կաքավ), *Grus grus L.* (կռունկ) և այլն:

Մարդու գործունեության հետ կապված բազմաթիվ պատճառներով (բուսականության վերացում, ոռոգում, ավտոճանապարհների և այլ գծային կառուցվածքների կառուցում, օգտակար հանածոների արդյունահանում և վերամշակում, որսագողություն և այլն) կենդանիների թիվը կրճատվել է և շարունակում է կրճատվել:

**2.7 Բնության հատուկ պահպանվող տարածքներ**

Հայաստանում կենսաբազմազանության պահպանումը, հիմնականում, իրականացվում է բնության հատուկ պահպանվող տարածքներում, որտեղ կենտրոնացած է բուսական և կենդանական աշխարհի տեսակազմի 60-70%-ը, ներառյալ հազվագյուտ, անհետացման վտանգի տակ գտնվող, վտանգված և էնդեմիկ տեսակների ճնշող մեծամասնությունը:

Ստորև բերված Աղյուսակ 2-1-ում նշված են Բնության հատուկ պահպանվող տարածքները (ԲՀՊՏ-ներ): Ամենամոտը՝ Արզական-Մեղրաձորի պետական արգելավայրն է, որի առավել մոտ գտնվող հատվածը տեղակայված է մոտ 4-4.5 կմ հեռավորության վրա: Մնացած ԲՀՊՏ-ները գտնվում են առավել քան 10 կմ հեռավորության վրա:

**Աղյուսակ 2-1 Բնության հատուկ պահպանվող տարածքներ**  
**ԱՆՎԱՆՈՒՄ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՏԱՐԱԾՔ, ՀԱ ԳՏԼՎԵԼՈՒ ՎԱՅՐ ՄԱՆՐԱՄԱՍԵՐ**  
**ՏԱՐԵԹԻՎ**

Անվանում	Տարի	Տարածքի մակերես (հա)	Վերահսկման տեսակ	Վերահսկման նպատակ
Սևանի ազգային պարկ	1978	147,343	Հայկական իրաբխային լեռնաշխարհի հյուսիսային մասում, Գեղարքունիքի մարզ	Ներառում է 4 ազգային պարկ/արգելոց, 2 արգելավայր, ռեկրեացիոն և տնտեսական գոտիներ
Հանքավանի ջրաբանական պետական արգելավայր	1981/2009	5,202.86	Մարմարիկ գետի վերին հոսանքի ջրահավաք ավազանի տարածքի սահմաններում: Սահմանները սահմանվել են ՀՀ Կառավարության 04.11.2010թ. N 1431-Ն	Մարմարիկ գետի վերին հոսանքի ջրահավաք ավազանի տարածքի հիդրո և էկո համակարգեր և դրանց կենսաբազմազանություն



			Որոշմամբ	
Արգական-Մեղրաձորի պետական արգելավայր	1971	13532	Մարմարիկ և Դալարիկ գետերի ավազաններում, կենդանիներ /այծյամ, ծովի մակարդակից 1600-2100մ բարձրության վրա	Հազվագյուտ և արժեքավոր ուսուրական բժավոր եղջերու, գորշ արջ/
Բանքսի սոճու պետական արգելավայր	1958	4	Հրազդանի տարածքի Մարմարիկ գետի ավազանում, Ծաղկունյաց լեռնաշղթայի հյուսիսային լանջերին, ծովի մակարդակից 1800-2000 մ բարձրության վրա	Բանքսի սոճու տնկարկային տեսակի պուրակ
<<Ալպյան գորգ>> բնության (կենսաբանական) հուշարձան	2008	Սահմանները հստակ սահմանված չեն	Կոտայքի մարզ, Մեղրաձոր-Ֆիոլետովո գրունտային ճանապարհի ամենաբարձր մասում (Փամբակ լեռնաշղթայի Ամպասարի գագաթային մասում, ծովի մակարդակից 3053 մ բարձրության վրա), Մեղրաձոր գյուղից 7 կմ դեպի հյուսիս	Ալպյան գորգը բաղկացած է հետևյալից. Campanula tridentata, Taraxacum stevenii, Carum caucasicum, Plantago saxatilis, Poa alipina, Padicularis crassirostris, Gentiana pontica, Sibbaldia parviflora և այլ կարճ բույսեր

**2.8 Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկ**

Այս հոդվածը ներկայացնում է Կոտայքի մարզի Պտղնի բնակավայրի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 14 հուշարձան (8 միավոր):

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարա նիշ	նշան.	հավելյալ նշումներ	պատկեր
-----------	-----------	-------------	-------	------------	-------	-------------------	--------

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ	պատկեր
Ամրոց	մ.թ.ա. 2-1 հազ.	գյուղից 1.5-2 կմ հվ-աե, եռանկյուն աձև հրվանդանի վրա	—	<a href="#">6.54/1</a>	Հ		<a href="#">Լուսանկար վերբեռնել</a>
Բնակատեղի	մ.թ.ա. 2-1 հազ.	ամրոցից աե և հս-աե	—	<a href="#">6.54/1.1</a>	Հ		<a href="#">Լուսանկար վերբեռնել</a>
Ամրոց, «Պտենիս»	մ.թ.ա. 2 հազ. միջնադար		—	<a href="#">6.54/2</a>	Հ		<a href="#">Լուսանկար վերբեռնել</a>
Դամբարանատաշտ	մ.թ.ա. 2-1 հազ.		—	<a href="#">6.54/2.1</a>	Հ		<a href="#">Լուսանկար վերբեռնել</a>
Գերեզմանոց	12-20 դդ.	գյուղի աե ծայրին	—	<a href="#">6.54/3</a>	Հ		<a href="#">Լուսանկար վերբեռնել</a>
Խաչքար	11 դ.		—	<a href="#">6.54/3.1</a>	Հ		<a href="#">Լուսանկար վերբեռնել</a>
Գյուղատեղի	16-18 դդ.	գյուղի հվ ծայրին	—	<a href="#">6.54/4</a>	S		<a href="#">Լուսանկար վերբեռնել</a>
<a href="#">Եկեղեցի Պտղավանք, Պտղնիի տաճար</a>	6-7 դդ.	գյուղի մեջ	<a href="#">40°15'18" հս. . .</a> <a href="#">44°35'03" ավ. .</a>  <a href="#">HGRO</a>	<a href="#">6.54/5</a>	Հ		 <a href="#">Լուսանկար վերբեռնել</a>
Գերեզմանոց	13-17 դդ.	գյուղի մեջ	—	<a href="#">6.54/5.1</a>	Հ		<a href="#">Լուսանկար վերբեռնել</a>
Խաչքար	13-15 դդ.	գերեզմանոցից 50 մ ամ	—	<a href="#">6.54/5.1.1</a>	S	բեկորներ	<a href="#">Լուսանկար վերբեռնել</a>

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ	պատկեր
Խաչքար	15-16 դդ.	գերեզմանոցից մոտ	—	<a href="#">6.54/5.1.2</a>	S		<a href="#">Լուսանկար վերբերել</a>
Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1976 թ.	գյուղի մեջ	—	<a href="#">6.54/6</a>	S		<a href="#">Լուսանկար վերբերել</a>
Մատուռ	19 դ.	գյուղից հվ, ձորի մեջ, ճանապարհի ոլորանի աջ եզրին	—	<a href="#">6.54/7</a>	S	վերակառ. 20 դ.	<a href="#">Լուսանկար վերբերել</a>
Մատուռ Թուխ Մանուկ	17 դ.	գյուղի հվ ծայրին	—	<a href="#">6.54/8</a>	Հ		<a href="#">Լուսանկար վերբերել</a>

**3. ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՕԴԵՐՆՈՒՅԹԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆԸ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ընթացքում հնարավոր են վնասակար նյութերի մերձգետնյա կոնցենտրացիաների ավելացումներ:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արա՞ության նվազեցում, անհողմություն, մառախուղ) մասին հաղորդագրություն ստանալուց հետո կատարվում են հետևյալ գործողությունները (միջոցառումները),

- I կարգի վտանգի (զգուշացման) ժամանակ խստացվում է արտադրական գործընթացների ցուցանիշների և ռեժիմի վերահսկողությունը,
- II կարգի վտանգի ժամանակ դադարեցվում է գազալցումը:

Նախատեսվող գազալցման կայանը նախատեսված է շահագործել շուրջօրյա ռեժիմով: Ցերեկային ժամերին միջոցառումները իրականացվում են անմիջապես դեկավարի կամ

նրան փոխարինող անձի կողմից: Մնացած ժամանակ՝ հերթափոխի պատասխանատուի կողմից:

**4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ**

Շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետ. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված ախատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

**4.1 Ռիսկերի գնահատում**

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

**4.2 Արտանետումների աղբյուրները**

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

**4.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն**

**4.3.1 Մթնոլորտային օդ**

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- կառուցապատման ենթակա տարածքը ցանկապատել
- շինությունների ծածկում անթափանց թաղանթով, համապատասխան բարձրության
- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,

- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով:
- իրականացնել շինտեխնիկայի անվադողերի լվացում շինհրապարակից դուրս գալուց առաջ
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

#### 4.3.2 *Ջրային ռեսուրսներ*

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- տարածքի հոսքերը կմիավորվեն մեկ բակային ցանցում և կմիացվեն սելավային ջրացանցին:
- անձրևվների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը և անվադողերի լվացումից առաջացած կեղտաջրերը կուղորդվեն պարզարան, որը իրենից ներկայացնում է պլաստմասե տարողություն: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադբ:

#### 4.3.3 *Հողային ռեսուրսներ*

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավազ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փոված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,

- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինադրից:

**4.3.4 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը**

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

Ըստ նախնական գնահատման, ապահովվելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

**4.3.5 Հակահրդեհային միջոցառումներ**

- ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և ադրից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,
- բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

զ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

դ) անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ժամանակ թույլ չտալ շինարարական տեխնիկայի գերբեռնված աշխատանք, խստորեն հետևել տեխնոլոգիայի ընթացակարգին, անդորրի պայմաններում դադարեցնել շինարարական տեխնիկայի աշխատանքը:

#### 4.3.6 Աղմուկ և թրթռում

Ներկայացվող տեղանքում աղմուկի աղբյուր կարող են հանդիսանալ միայն ավտոտրանսպորտային միջոցները:

ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 սանիտարական նորմերով:

Հաշվի առնելով որ գազայակայանը բնակելի տարածքներից գտնվում է զգալի հեռավորության վրա, ինչպես շինարարության, այնպես էլ շահագործման փուլերում աղմուկի մակարդակը զգալի չէ և հարակից տարածքում չի գերազանցի սանիտարական նորմերը:

Շինարարության ընթացքում որպես կարևորագույն միջոցառումներ, անհրաժեշտ է՝

- խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգալուն ազդակալիչների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը;
- Աղմկահարույց աշխատանքներն հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերաբար ստուգել և կարգադրել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:
- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:



**4.3.7 Թափոնների կառավարում**

Ավտոմեքենաների գազալիցքավորման ճնշակայանի կառուցման ընթացքում թափոնների ճիշտ կառավարման համար կարևոր են հետևյալ միջոցառումների իրականացումը.

- Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:
- Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից
- Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել
- Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը;
- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;
- Վտանգավոր Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը

Ավտոմեքենաների գազալիցքավորման ճնշակայանի կառուցման ընթացքում առաջացող շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

**4.3.8 Տարածքի բարեկարգում կանաչապատում**

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը բարեկարգել և կանաչապատել:

Կանաչապատ տարածքների ռոտզուման ջուրը ապահովելու նպատակով կառուցապատող ընկերությունը կղիմի «ԿՈՏԱՅՔ» ջրօգտագործողների ընկերություն տեխնիկական պայմաններ ստանալու համար:

Ռոտզման համար կնախատեսվի կաթիլային ռոտզման համակարգ:

Այն տեղամասերում, որոնք ենթակա են հնարավոր ազդեցության, տնկված թփուտային բուսականության բարձր աճը և կպչողականությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել մոնիթորինգ:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառված են շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվեն շինարարական կազմակերպության կողմից:

**4.4 Թափոնների կառավարում**

Շինարարական աշխատանքների ընթացքում գնահատվում են ստորև ներկայացվող տեսակային կազմով վտանգավոր թափոնների առաջացում (բն. նախարարի N430Ն հրամանի հավելված, 25 դեկտեմբեր, 2006թ).

	Անվանումը	Վտանգավորության դասը	Ծածկագիրը ըստ «Թափոնների ցանկի»	Քանակը,
1.	Շինարարական աղբ	IV	9120060101004	150 մ <sup>3</sup>
2.	տարածքում առաջացած կենցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)	IV	9120040001 00 4	0.7 տ/տարի
3.	Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող	V	31401100 08 99 5	828 մ <sup>3</sup>

Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հասկացված վայր: ԱԳԼՃ կայանի շահագործման ընթացքում կառաջանա կենցաղային աղբ, որը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի համապատասխան ընկերության կողմից: Տարածքում նախատեսվում է տեղադրել աղբանոթներ՝ 6 հատ և կափարիչով աղբի կոնտեյներներ՝ 2 հատ:

**5. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ**

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:

- 3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ
- 4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է մասնահանել ամբողջ շինարարության ընթացքում 875 հազ. դրամ:

Մշտադիտարկում և բնապահպանական միջոցառումներ, շին. փուլ/ դրամ		
Տարածքի ջրցան փոշեգոյացումը կանխելու նպատակով		175000
Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ;	10x40000	400000
Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:	10x30000	300000
Ամբողջ շինարարության համար		875000

Շինարարական աշխատանքների ընթացքում կիրականացվեն մշտադիտարկումներ ուղղված շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանման:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախազգուշացումներ և աշխատողների անվտանգություն	<p>(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ</p> <p>(b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել</p> <p>(c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա:</p> <p>(d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ)</p> <p>(e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:</p>
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	<p>(a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար՝ Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով</p> <p>(b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է գերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով</p> <p>(c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի:</p>
	Աղմուկ	<p>(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում</p>

	<p>Թափոնների կառավարում</p>	<p>(b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:</p> <p>(a) Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:</p> <p>(b) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր:</p> <p>(c) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից</p> <p>(d) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն</p> <p>(e) Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները բազմանվազ օգտագործել</p>
<p>Կեղտաջրերի հեռացում</p>	<p>Ջրի որակ</p>	<p>(a) Շինարարական անձնակազմը կօգտվի գոյություն ունեցող կենցաղային միջոցներից, կոյուղաջրերի հեռացումը շինհրապարակից պետք է իրականացվի անջրթափանց սեպտիկ հոր,</p> <p>(b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն համայնքում գործող մասնագիտացված կետերում:</p>
<p>Հետիոտների և երթևեկության ապահովություն</p>	<p>Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի</p>	<p>(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.</p> <ul style="list-style-type: none"> <li>▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ</li> <li>▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար:</li> </ul>

	<p>վտանգներ</p>	<p>Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության զոնայում:</p> <ul style="list-style-type: none"> <li>▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին:</li> <li>▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար.</li> <li>▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում:</li> </ul>
--	-----------------	--

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	<ul style="list-style-type: none"> <li>- Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում</li> <li>- Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ</li> <li>- Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- Շինհրապարակ</li> <li>- Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ</li> </ul>	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	<ul style="list-style-type: none"> <li>- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում</li> <li>- Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում</li> </ul>	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
Իներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Իներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների	Մատակարարման ընթացքում	Կապալառու, մատակարար

			ստուգում		
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին զննում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու



**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**

- 1.** Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ, ЕМЕР/ЕЕА, 2009:
- 2.** СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
- 3.** СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
- 4.** СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
- 5.** Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
- 6.** Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
- 7.** Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.
- 8.** Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР, Москва 1984г.
- 9.** Нормы расхода топлив и смазочных материалов на автомобильном транспорте.
- 10.** Нормы расхода жидкого топлива для машин, эксплуатирующихся в предприятиях уборки городских территорий, санитарной очистки и ремонтно-строительном производстве.
- 11.** "Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին" ՀՀ օրենքը, ընդունված 2006 թվականի դեկտեմբերի 20-ին:
- 12.** ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի "նակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշում:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ  
Ղ Ե Կ Ա Կ Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

N° ՔՄՈՒ/09.2.1/21556-23

25 09 2023 թ.

ՔԱՂԱՔԱՑԻ Վ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ  
ք.Երևան, Դեմիրճյան 17Ա շենք, 22բն.  
Էլ. փոստ՝ aleksanyan.1960@mail.ru

Հարգելի պարոն Թումանյան

Ի պատասխան Ձեր 15.09.2023թ. դիմումի՝ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինը քննարկել է ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի Պտղնի գյուղի 23-րդ փողոց 4 հասցեում նախատեսվող ավտոմեքենաների գազացման ճնշակայանի նախագիծը, և տեղեկացնում է, որ այն համապատասխանում է հրդեհային անվտանգության պահանջներին:

Տեղեկացնում եմ նաև, որ Տեսչական մարմինը նախագծի վերաբերյալ քաղաքաշինական մասով դիտողություններ չունի:

Սույն գրությունը վավեր է նախագծում համապատասխան դրոշմակնիքի առկայության դեպքում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ  Недействительная подпись

X

ՍՈՒՐԵՆ ՄԻՆԱՍՅԱՆ

